Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

42

ՑԻԱԼԻՍՏ. ՖԵԴԵՐԱՏ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

*Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացէ՛ք.*

*Ա. ԲԵՐԻՒՇԻՆԱ.*

№ 324

# ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՍ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ ԴԱՐՁԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 38 ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 38

ՄՈՍԿՎԱ—1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1) Ռ. Սոց. Ֆեդ. Խորհ. Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
2) Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկեան բանւորներին»—գինը՝ 1 ռ.
3) Վ. ՖՐԻՉԵ. «Պրոլետարական պոէզիան»—գինը՝ 3 ռ.
4) ՉԻՉԵՐԻՆ. «Բրեստից յետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին)—գինը՝ 1 ռ.
5) ՆԵՐՀԱԿ. «Դէպքեր Բաքւում. Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բաքւի Խորհրդային Իշխանութիւնը—գինը՝ 1 ռ.
6) Ն. ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառօտ կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը)—գինը՝ 3 ռ.
7) ՆԵՐՀԱԿ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան»—գինը՝ 1 ռ.
8) Ն. ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմմունիստների ծրագիրը»—գինը՝ 10 ռ.
9) ՊԱՒԼՈՎԻչ (Վելտման) «Անգլիան և իր դերը համաշխարհային պատերազմի մէջ»—գինը՝ 7 ռ.
10) ԿԱՐԼ ՌԱԴԵԿ. I «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում. II «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով)—գինը՝ 1 ռ.
11) «Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսոնին—գինը՝ 1 ռ.
12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—գ. 3ռ.
13) Հ. ՑՈՎԱՍԻՓԵԱՆ. «Դէպի քաղաքական կռիւ»—գինը՝ 1 ռ.
14) Գ. ԶԻՆՈՎԵՒԻ, ԻՒ. ԿԱՄԵՆԵՎԻ և Լ. ՏՐՈՑԿԻ—«Ն. Լենին» (Վլադիմիր Իլիչ Ուլեանով)—գինը՝ 3 ռ.
15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմմունիստական Մանիֆեստ»—Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների առաջաբաններով—գ. 10 ռ.
16) Պ. ԼԱՖԱՐԳ. «Տնտեսական Եւոլիւցիան և Կոմմունիզմ»—գ. 3 ռ.
17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչպէս է նա կազմւում»—գինը՝ 2 ռ.
18) «Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը»—գինը՝ 3 ռ.
19) Պ. ԿԵՐԺԵՆՑԵՒ. «Ինչպէս վարել ժողովը»—գինը՝ 3 ռ.
20) Կ. ԵՐԵՄԵԵՒ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութիւն» գ. 2 ռ.
21) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ո՞ւմ հետ էք դուք, գիւղացիք»—գինը՝ 1 ռ.
22) Վ. ԵՂԻԱՆԵՍԵԱՆ. «Հայ փախստականներին»—(ձրի):
23) Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան (Բոլշեւիկների) ծրագիրը—գինը՝ 3 ռ.
24) Ինտերնացիոնալի Պլատֆորման—գինը՝ 1 ռ.
25) Ն. ԼԵՆԻՆ. «Թէզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին—գինը՝ 50 կոպ.
26) «Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Ներկայացուցիչի զեկուցումը III Կոմմունիստական Ինտերնացիոնալին»—գինը՝ 60 կ.
27) «Կոմմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարներին»—գինը՝ 1 ռուբ.
28) Ն. ԼԵՆԻՆ. «Երրորդ Ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ» —գինը՝ 1 ռ.
29) Ն. ԼԵՆԻՆ. «Ի՞նչ պէտք է լինի մեր կուսակցութեան անունը»—գինը՝ 1ռ.
30) ՊԱՆՆԵԿՈՒԿ. «Թալանի բաժանումը» գինը՝—1 ռ.
31) ԿԱՐԻՆԵԱՆ «Իմպերիալիզմ և Արմենիա»—գինը՝ 5 ռ.
32) «Կարմիր Աստղ»—գինը՝ 50 կ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՖԵԴԵՐԱՏ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

*Պրոլետարնե՜ր բոլոր երկրների, միացե՛ք.*

ԱԳՉ
69

335.54
Բ

*Ա. ԲԵՐԻՒՇԻՆԱ.*

# ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՍ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ ԴԱՐՁԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
№ 38 ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ № 38
ՄՈՍԿՎԱ—1919

69 - Աի-Ղ

Տպարան՝ Կենտր. Հայկակ. Կոմիսար., Մոսկվա, Արմյանսկի փ., տուն 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянский пер., 2

# ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԵՍ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ ԴԱՐՁԱՑ.

Ինձ հարցնում էին և շարունակում են հարցնել, թե ինչո՞ւ համար եմ ես կոմմունիստ դարձել։

Այո, ես կոմմունիստ եմ, և ոչ թե էսէր, մենշևիկ կամ թե չէ հասարակ քաղքենի։

Ես կոմմունիստ եմ, և ես ցանկանում եմ այդ «կոմմունիստ» բառը բարձր, շատ բարձր ձայնով գոռալ, որպեսզի բոլորը, ամբողջ աշխարհը, իմ բոլոր եղբայրները և ինձ արհամարհող թշնամիները լսեն։ Թշնամիներ շատ կան, բայց ես նրանցից չեմ վախենում։

Ես կոմմունիստ եմ, լսեցեք այդ բանը իմ եղբայրներ, իսկ դուք թշնամիներ սարսափեցեք։

Ինձ հարցնում են, իսկ որ ժամանակի՞ց եք դուք կոմմունիստ դարձել։

Ձևականորեն, ես, 1917 թւի մարտից այդ կուսակցության մեջ եմ, բայց կոմմունիստի ոգին, ինձ հետ միասին է ծնւել, նա իր դաստիարակությունն ստացել է ամենապատանի հասակից։

Ձեզ ո՞վ դաստիարակեց այդ ուղղությամբ։

Ինձ այդ կերպ դաստիարակեցին կյանքի պայմանները և իմ թշնամի կապիտալը։ Նա ինձ և իմ բոլոր աշխատավոր ընկերներին անողոք կերպով

ծաղր ու ծանակի ենթարկեց և երկար ժամանակ այս ու այն կողմ գլորեց։ Նա ստիպում էր ինձ իմ ուժերից վեր ու ծանր աշխատանք կրել, քիչ քնել, վատ սնվել, ապրել հեղձուցիչ, խոնավ, կեղտոտ և փոքր հյուղերում և այդ բոլորն այն ժամանակ՝ երբ ինքը կապիտալը ճոխութեան և առատութեան մէջ էր խեղդւում։

Ահա այդպիսով նա իմ դեռ պատանեկական հոգում չարութեան սերմը ցանեց և զինեց իր դէմ։

Վրէժխնդրութեան անյագ ծարաւն իմ կրծքում եռ է գալիս, ես շարունակում եմ այդ ուղղութեամբ գնալ և բարձրաձայն յայտարարել.

«Բոլոր թշնամիներից և աշխատաւորների ա-
րիւնը քամողներից
Անողոք կերպով վրէժ պիտի լուծել,
Բոլոր թագաւորներին ու հարստութեան տէ-
րերին մահ և վրէժխնդրութիւն
Յաղթութեան հանդիսաւոր ժամը մօտ է»։

Պատանեկական հասակիցս դեռ, հէնց որ սկսեցի քիչ թէ շատ բան հասկանալ, սկսեցի որոնել այն ճանապարհը՝ որով մենք պէտք է գնանք և կռուենք կապիտալի դէմ, վերջապէս գտայ այդ ճանապարհը և ես ինքս ինձ ասի, «կամ մահ կամ յաղթութիւն, ես մահից երբէք չեմ վախենում, նա ինձ համար ամենևին սարսափելի չէ»։

Կապիտալն իր անողոք վերաբերմունքով դէպի ինձ, դարձնեց ինձնից երկաթէ, դիմացկուն, անձ-

նաղոն և ոչնչի առաջև կանգ չառնող կոմմունիստը։ Դա է այն հողը՝ որտեղից դուրս են գալիս կռուած և կոփուած կոմմունիստները։

Ծագումով ես գիւղացի եմ, ծնուել եմ նեղ և աղքատիկ խրճիթում։ Վեց տարեկան էի երբ հայրս մեռաւ։ Մեր ընտանիքը 7 հոգուց էր բաղկացած, մայրս, երկու եղբայր և չորս քոյր։ Մեծ եղբայրս 14 տարեկան էր իսկ փոքրը 3։

Հօրս մահով դաշտային աշխատանքը համարեայ ամբողջութեամբ ընկաւ 14 տարեկան եղբօրս և մօրս վրայ։

Որովհետև դաշտային աշխատանքները մեր ընտանիքի կարիքներին բաւարարութիւն չէին տալիս՝ այդ պատճառով էլ երկու մեծ քոյրերս ստիպուած էին բանւորուհիներ դառնալ և երբեմն էին միայն տանը լինում։ Ընդամենը մի ձի և մի կով ունէինք, շատ էինք ցանում, և քիչ ստանում։ Ամեն տարի գարնանը ստիպուած էինք լինում ցանքսի համար ցորեն գնել, իսկ դրա համար փող էր հարկաւոր, բայց դա էլ հերիք չէր, հարկաւոր էր վճարել նաև հողի համար։ Ու այսպէս քահանաներին արենտի համար, թագաւորին կոռ ու բեքեար, բայց որտեղի՞ց վերցնէինք։ Երկու քոյրերս հարկադրուած եղան այդ կարիքները վարձու իրանց աշխատանքով հոգալ։

Ես փոքր, 6 տարեկան էի, բայց տեսայ թէ ինչպէս մայրս գոյութեան կռւում և ծանր աշխա-

տանքի տակ ճկւում էր, նա առաւօտեան վաղ էր վերկենում, երեկոյեան ուշ պառկում և վատ կե-րակրւում։

Կով ունէինք, բայց մենք կաթի փոխարէն ջուր էինք խմում. աշխատում էինք վերջին ձուն ծախել՝ որպէսզի կարողանանք մեր ծախքերը և ուրիշ պէտքերը հոգալ։

Ես երբէք չեմ կարողանում մոռանալ, թէ ինչ-պէս մի անգամ առաւօտեան երբ դեռ մենք թէյ էինք խմում՝ ներս մտաւ գիւղի մեծաւորը և կո-պիտ կերպով պահանջեց հարկերի վճարումը։ Ես տեսայ թէ ինչպէս մայրս վախեցաւ, դէմքի գոյնը փոխեց և համարեայ թէ ծնկաչոք սկսեց աղաչել որ պարտքի վճարումը մի քիչ յետաձգւէր։ Նա կոպիտ կերպով մօրս դէն հրեց և չթոյլ տալով որ թէյը վերջացնենք՝ սեղանի վրայից ինքնաեռը խլեց։ Մայրս լաց եղաւ և սկսեց աղաչել նրան՝ որպէսզի ինքնա-եռը չվերցնի և խոստացաւ շուտով պարտքերը վճարել, բայց նա կոպիտ կերպով հրամայեց լռել, և սպառնաց, որ եթէ նա շարունակի այդպէս վարուել՝ ապա նավերջին կովն էլ քաշ կտայ կտանի։

Մօրս ծանր կեանքը ինձ վրայ էլ արտացոլ-ւեց։ Դեռ երեխայ երեխայ ես հասկանում էի մօրս բոլոր տանջանքները, և երբ նա գնում էր դաշտ աշխատելու և կամ ձմեռը անտառից փայտ բերե-լու՝ ես նրան օգնած լինելու կամ աշխատանքը թեթևացրած լինելու համար, ջուր էի բերում,

լւանում էի խրճիթի յատակը և ձիու ու կովի համար մարագից սահնակով խոտ կրում։

Իմ կեանքս այդպէս էր մինչև 9 տարեկան հասակս, իսկ 9 տարեկան հասակումս երբ ինձ հարկաւոր էր դպրոց գնալ ու սովորել, ուրիշ աշխատանքի, ես պէտք էր խնամէի մի փոքրիկ երեխայի և այդպիսով զրկւեցի նաև երեխայի հանգիստ կերպով քնանալու իրաւունքից։ Ես պարտական էի առաւօտեան 2—3 ժամին հասակաւորների հետ միասին վերկենալ, գիւղացիները գնում էին դաշտ հնձելու, իսկ ես պէտք է երեխային օրօրէի և միաժամանակ էլ սպասէի հովւին՝ ու գնայի մեր կովն էլ նախիր ուղարկէի։

Երբ ես 10 տարեկան դարձայ՝ սկսեցի յամառ կերպով պահանջել որ ինձ դպրոց ուղարկեն, և ուղարկեցին։ Դա իմ մանկութեան ամենաերջանիկ ժամանակն էր։ Ուսումն ինձ այնքան էր հետաքրքրում՝ որ ես իմ ընտանեկան դառն՝ կեանքը մոռանում էի։

Բայց իմ երջանկութիւնը երկար չտևեց։ Գիւղական դպրոցի երկուդասարանն աւարտեցի և ստիպւած եղայ թողնել ուսումը։ Մայրս յայտնեց ինձ որ վերարկուս և կօշիկներս պատառւած են, փող չկայ որ նորը գնենք, ուտելու հացն էլ քիչ, ուրեմն դպրոց գնալուն էլ պիտի վերջ տալ և աշխատանքի գնալ։ Ես 9 տարեկան հասակից սկսած՝ ամառ ժամանակ երբեք տանը չէի լինում,

տուն գալիս էի հենց այն ժամանակ՝ երբ գյուղացում պարապմունքներն սկսում էին։ Եւ. ահա երրորդ տարին դրանից էլ զրկվեցի։

Օ՛հ, պետք էր տեսնել, թե ինչպես ես դառն կերպով լաց էի լինում։ Մորս ծանր դրութիւնը հասկանում էի, բայց սաստիկ կերպով սովորել էի ուզում։ Ես ասում էի, համաձայն եմ հին վերարկուով և վատ կոշիկներով գյուղից գնալ. սակայն այնու ամենայնիւ մերժեցին իմ խնդիրը։ Ըստ երևույթին մայրս վախենում էր թե չկարողանայ մի աւելորդ հոգու կերակրել։ Դպրոց չշինեցին, ինչ սովորելու հնարաւորութիւն չէին տալիս, միաժամանակ էլ մեր երեսով էին տալիս որ մենք «խաւարամիտներ», անկիրթներ և բոկոտան խոզեր ենք»։

Ահա որտեղից էր իմ մեջ չարութեան զգացմունքը առաջանում։

Ապրելը շատ դժուար էր և ոչ ոք օգնութեան չէր գալիս։ Պետութիւնը քաղցից մեռնողներին չէր տեսնում, և այդ այն ժամանակ՝ երբ հարուստները ամեն ինչ առատութեամբ ունէին, որ իզուր տեղը մսխում, հոսում և դուրս էր թափւում։ Նա չէր ուզում գիտակցել, որ աշխատակցութեան կարող մարդիկ կան։ Բայց չնայած դրան՝ երբոր եղբայրս 21 տարեկան եղաւ՝ պետութիւնը նրան վերցրեց իր կարիքների համար։

Կառավարութիւնը չքաւորների դրութիւնը բարելաւելու մասին չէր մտածում, ընդհակառակը

նա ուզում էր այնպէս անել՝ որ նրանցից աւելի շատ օգուտ քաղէր, այդ պատճառով էլ ամեն տեղ գինետներ էր բաց անում, խլում էր աշխատաւորների վերջին կոպէկները, եկեղեցիներ էր շինում և զարդարում նրանց ոսկով ու արծաթով, իսկ խեղճ աշխատաւորները, որոնք ծերութեան հասակում առանց կտոր հացի ու պատսպարանի էին մնում, ձմեռուայ սառնամանիքի ցրտերին պատառոտած շորով ու կօշիկներով էին ման գալիս՝ կապուտած շրթունքներով և տառապալից դէմքով գալիս էին այդ եկեղեցին և բազկատարած ձեռքերով ողորմութիւն խնդրում։

Ես համոզուած եմ, որ ոչ մի կրօնասէր աշխատաւոր ինձ հետ չպիտի ուզի վիճել այն մասին՝ որ ոսկով ու արծաթով հարկաւոր էր հասարակական բարեգործական տներ շինել, իսկ ոչ թէ՝ հասարակ նկարների առջեւ։

Բայց նրանց ի՞նչ բանն էր այդ մասին մտածել, նրանք իրենց գործն արին այնպէս՝ ինչպէս ցանկանում էին։ Ահա այդ հանգամանքն ինձ վրայ խիստ կերպով ազդեց։

Ես դպրոցի փոխարէն գնացի իմ քրոջ մօտ՝ որն այն ժամանակ ապրում էր Նիժէգորոդեան երկաթուղագծի մօտերքը, Զիմինի գործարանում։ Ես իմ այն տեղի կեանքի մասին պատմելու չեմ, նա դաժան էր։ Բայց այնտեղ իմ աչքերի առաջեւով անց-

կացաւ գործարային բանւորների կեանքի ամբողջ պատկերը։

Ամեն օր ժամի երեքին, միջանցքի «կալադուշկան» ժամի Գ-ին գործարանային սուլիչի չարագուշակ աղմուկը, բանւորների դալուկ և քամւած դէմքերը, ամեն մի դատարկ բանի համար տուգանքներից առաջացած ծոյա յոգնաբեկ դրութիւնը, այս բանում մեղաւորը շատ անգամ իրանք գործարանատէրերն էին լինում։ Նրանց կանչում էին գործարանի վարպետի մօտ, յանդիմանում և տուգանք էին վերցնում, և եթէ պատահէր որ բանւորը փորձէր ինքն իրան պաշտպանելու համար մի երկու խօսք ասէր՝ դռնից դուրս կանէին նրան, թողնելով առանց պատսպարելու տեղի, առանց հացի, բաղդի վիճակին։

Բանւորը պաշտպանւելու իրաւունք չունէր։ Բանւորների կեանքի մասին շատ բան կարելի է ասել, բայց այս տողերը կարդացող աշխատաւորը առանց դրան էլ կհասկանայ։

Ցարիզմի ժամանակւայ իմ կեանքի մասին ես ձեզ դէռ բոլորը չպատմեցի։ Դպրոցի և ուսման միտքն ինձ հանգիստ չէր տալիս, երբ ես իմացայ՝ որ Մոսկւայում հասակաւորների կիրակնօրեայ դպրոց գոյութիւն ունի, վճռեցի. «Ի՞նչ գնով էլ որ լինի՝ գնալ Մոսկւա»։

Ես Մոսկւա ընկայ վերջիվերջոյ, բայց սովորել չյաջողւեց ինձ։ Ես մտայ մի արհեստանոց դերձա-

կութիւն սովորելու, որտեղ աշխատում էի առաւօտեան ժամի 8-ից մինչև երեկոյեան ժամի 9-ը, շատ անգամ աշխատում էինք նաև կիրակի օրերը և հակառակ իմ ցանկութեանը՝ չկրցի լրացնել իմ կրթութիւնը.

Բայց դրա փոխարէն ես անցկացայ գիտութեան 8 տարուայ մի դասընթացք՝ որը ինձ այժմ, շատ ու շատ օգնեց։ Այդ այն դասընթացքն է՝ որը ցոյց է տալիս բանւորին, թէ ինչպէս պէտք է նա կռուի իր իրաւունքների համար։ Ես այդ տեղ տեսայ ու իմ կաշու վրայ հիմնական կերպով փորձեցի, թէ ինչպէս ծանր է արհեստանոցում աշխատողների կեանքը, նամանաւանդ անտանելի է գեղահաս աղջիկների վիճակը, որոնց խիստ անդթութեամբ են շահագործում։

Արհեստանոցի տէրն էլ մի աղջիկ ունէր, և ես դրանց իրար հետ համեմատում էի, նոքա բոլորը միևնոյն տարիքի էին, բայց պէտք էր տեսնել, թէ ինչպէս զանազան էր նրանց կեանքը։ Խեղճ աշխատաւոր աղջիկներ, նրանց ամբողջ օրերով մագազինից մագազին էին ուղարկում, հայհոյում և յաճախ էլ ծեծում։ Նրանց ստիպում էին յատակներ և կրկնակօշիկներ լւանալ, վերարկուներ քանդել և խոհանոցում ամաններ մաքրել։

Սովորելու տարիքս անց էր կենում, իսկ սովորելու ժամանակ չէր լինում։ Աղջիկը չորս տարի ծառայում էր, բայց աշխատել չէր կարողանում բա-

լրավին, բայց տարբեր՝ հարկավոր էր։ Աշխատանք գտնելը դժվար էր, ոչ ոք չէր հավատում, «կփճացնե՛ս», ասում էին նրան մի կողմից, մյուս կողմից էլ ինչո՞վ պետք է կարէր, մեքենայ չկար և բնակարանն էլ անյարմար», մութ անկյունում և տախտակի վրայ նստած խօմ չի կարելի աշխատանք կատարել։ Կեանքի այդ տեսակի ծանր պայմաններից դուրս գալու համար մեր առջև երկու միջոց կար, ինքնասպանութիւն անել կամ պոռնկութեան դիմել։ Աւելի յաճախ երկրորդ միջոցին էին դիմում, իհարկէ շատերը ինքնասպանութեամբ կվերջացնէին և իրենց մարմինն անարգանքի չէին ենթարկի, իրանց բարոյականութիւնը չէին ծախի արհամարհելի մամոնային։

Բայց կապիտալը յենւելով կրօնի վրայ՝ խիստ կերպով հրամայեց հոգևոր հայրերին հսկել ինքնասպանութիւն անողների վրայ, իսկ արծաթասէր տէրտէրները ամէն տեղ գոչում էին «չի կարելի ինքնասպանութիւն անել, այդ բանն անողները պիտի դժոխքի յաւիտենական տանջանքին ենթարկւին, իսկ անառակութիւնը ոչինչ, անառակին ծերութեան հասակում աղօթելով կարելի է փրկել։

Ահա թէ ինչ էին ասում այդ սև եթօվպացիները։ Եւ այդ մաքուր, լուսաւոր անմեղ էակները սրտի ցաւով, անտանելի տանջանքներով գնում էին այն սայթաքուն ճանապարհով, իսկ կապիտալը իր այդ զոհերին հոգևոր հայրերի միջոցով դդելով ան-

բարոյականութեան անկումը՝ ինքն էր ամենից առաջ թքում նոցա երեսին, ճչում նրանց անառակութեան մասին և ինքն էլ առաջինը օգտւում նրանցից։

Դրա մասին շատ բան դեռ կարելի էր ասել, օրինակ, անխնայ աշխատանքի և չնչին վարձքի, արհեստանոցների տէրերի և նրանց լակոտների դէպի այդ աղջկերքն ունեցած վերաբերմունքի մասին։ Այս բոլորը սպիտակեղէնի արհեստանոցներում է տեղի ունենում, որտեղ բացառապէս կանայք են աշխատում, ապա մի նայէիք այնտեղ՝ որտեղ զը-գեստներ են կարում, կամ որտեղ լւացք են անում, ի՞նչ կտեսնէիք այնտեղ, միմեայն գինի, փողոցային հայհոյանք, և անառակութիւն։

Ահա թէ որտեղ է աշխատաւորների դժոխքն ու տանջանքները։ Բանւորը մեղաւո՞ր է, որ՝ հիւծող և ուժերից վեր աշխատանքից յետոյ, իր ցաւերը մոռացութեան տալու նպատակով վերցնում է բաժակն ու հարբում։

Դա է այն հնոցը՝ որտեղից դուրս են գալիս համողւած կոմմունիստները, նրանից եմ դուրս եկել և ես։

Աշխատաւորների այդ ծանր կեանքը տեսնելով, և զգալով ինձ վրայ՝ ես սկսեցի լուրջ կերպով մտածել, թէ ո՞րտեղ է ճշմարտութիւնը, ո՞րտեղ է արդարութիւնը։ Ով որ շատ է աշխատում՝ նա վատ է ապրում, իսկ ով որ քիչ է աշխատում կամ

բոլորովին ոչինչ չի անում խեղդւում է շքեղութեան մէջ։

Ես այն ժամանակ արդէն զգացի որքան հնարաւոր էր կռուել խազէինների դէմ, պաշտպանել աղջիկներին, վճռական կերպով մերժեցի երեկոյները աշխատել, թէև այս վերջին հանգամանքը ամբողջ փոխթարին բարձրացրեց այն ժամանակուայ իմ տիրուհու մօտ բայց ես միևնոյնն է չէի վախենում։

—«Դուք մեր միջոցով էք ապրում» ճչում էր նա։

—«Ոչ թէ մենք ձեր, այլ դուք էք մեր շնորհիւ ապրում» պատասխանում էի ես։

Նախկին տիրուհի Սավինսկայան այդպէս էր ասում, բայց ես նրան չէի զիջում։

—«Մենք կարող ենք առանց ձեզ ապրել, իսկ դուք առանց մեզ քաղցածութիւնից կմեռնէք» պատասխանեցի ես նրան. իմ խօսքերը նրան վերին աստիճանի կատաղեցրին։ Ես ոչ սոցիալիստ և ոչ էլ կոմմունիստ էի, բայց պարզ էր ինձ համար թէ ով ինչով է ապրում։

Բայց ինչպէս պէտք էր կռուել անարդարութեան դէմ։

16 տարեկան հասակում ես իմացայ որ դերձակների միութիւն գոյութիւն ունի։ Ես իսկոյն այդ միութեան անդամ գրուեցի՝ որը ցոյց տուեց ինձ կռուելու ճանապարհը։

Վրայ հասաւ փետրուարեան յեղափոխութիւնը, որի ժամանակ իմ աչքերը բոլորովին բացուեցան և

ես գտայ աշխատաւորների թագաւորութեան, լոյսի, ճշմարտութեան և արդարութեան ճանապարհը։

Ցանկալի և երկար սպասուած ճանապարհը գտնուեց, և ես վճռեցի, ինչքան էլ որ ծանր չլիներ նա՝ դուրս չգալ նրանից։

Ես երդուեցի իմ և աշխարհի ամենամեծ մարդու առջև, որը առաջին անգամ ցոյց տուեց թէ որն է այն ճանապարհը՝ որով մարդիկ պէտք է դիմեն դէպի աշխատանքի թագաւորութիւնը, այդ մարդու մարմինը այժմ չկայ, բայց նրա հոգին մեր միջև է։ Ես երդուեցի և պատկառելի անմոռանալի Կարլ Մարքսին, որը թողեց մեզ բանուորներիս համար մի օրէնք՝ որտեղ պարզ կերպով ասուած է թէ ինչ ճանապարհով պէտք է ազատուին աշխատաւորները։

Ահա այդ օրէնքի գլխաւոր հիմունքը։ Կարլ Մարքսն ասում է, «աշխատաւորները կարող են ազատագրուել միմիայն այն ժամանակ՝ երբոր նրանք քաղաքական իշխանութիւնը կխլեն և բանուորների գերիշխանութիւն կհաստատեն»։ Մենք կոմմունիստ-ներս Կարլ Մարքսի ցոյց տուած այդ ճանապարհովն ենք գնում և հաւատացած ենք՝ որ աշխատանքը կապիտալին պիտի յաղթի։

Այդ օրէնքի սուրբ խօսքերը հետեւեալներն են. «ոչ ոք չի տայ մեզ փրկութիւն, ոչ աստուած, ոչ թագաւորը և ոչ էլ հերոսը, ազատութիւն մենք ձեռք կբերենք մեր սեփական ձեռքերով»։ —Միմիայն սեփական ձեռքերով։ Ցիմարութիւն է անուած

այն ուժերը, որը որ գալիք բաժինք է սպասում։

Աշխատանքն ու կապիտալը անհաշտելի թշնամիներ են, բայց նրանցից ուժեղն աշխատանքն է, իսկ առանց աշխատանքի չի կարող գոյութիւն ունենալ մարդկութիւնը։

Կապիտալը դեռ աշխատանքին տիրանալու մտքից չէ հեռացել, ըստ երևոյթին դա մի շատ համեղ պատառ է, որ նա չի ուզում առանց կռւի զիջել, այդ իսկ պատճառով էլ նա իրան թոյլ է տալիս ինչ որ հնարաւոր է, ամէն տեսակի խորամանկութիւն, զզւելի և զարշելի միջոցներ։ Նա ինտելիգենցիայի շարքերից փոքր և անարժան հոգու տէր մարդկանց, խանութի, գրասենեակի և ուրիշ տեսակի ծառայողներին կաշառում իր կողմն է քաշում։ Բայց նրանց հետ աշխատում են նաև յայտնի, աչքի ընկնող գայլերը, և սրա այդ ամբողջ կեղտոտ վոհմակը կռիւ է մղում աշխատաւոր դասակարգի դէմ։

Նոքա կոմմունիստներին ցեխոտել են և դեռ աշխատում են ցեխոտել։ Յեղափոխութեան առաջին օրերում, երբ որ տեսան թէ ընկ. Լենինն իրանց ամենաուժեղ թշնամին է՝ սկսեցին նրան վարկաբեկել, նրան մեղադրեցին լրտեսութեան, գաղտնի ոստիկանութեան գործակալ լինելու և ուրիշ յանցանքների մէջ։

Սակայն Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ ընկ. Լենինն արդարացաւ, նրան ճանաչեցին

ոչ միայն աշխատաւորները՝ այլ և բուրժուազիան Մարքսին հարկադրուած էին նրանում տեսնելու ոչ միայն հանճարեղ մարդուն, այլ և բանւորների խրատուների համար կռիւ մղող պատուաւոր անհատին։ Բուրժուազիան այժմ չի կարող խօսքով կըռուել ընկ. Լենինի հետ և սկսում է փողոցների անկիւններից կրակել նրա վրայ։ Ճանաչելով հանդերձ որ նա հանճար է՝ այնուամենայնիւ չի հրաժարւում նրան սրով խողխողելուց, նա ամէն տեսակի խարդախութիւնների է դիմում ու ասում, որ Լենինն իբր պատուաւոր մարդ է, բայց նրան շրջապատել է բանտ նստածների, աւազակների, ծոյլերի և ամէն տեսակի անպիտան մարդկանց մի խմբով՝ որ օգնութեան գնալու հնարաւորութիւն չի տալիս։

Բայց ամէն մի քիչ թէ շատ գիտակից բանւոր կասի։

«Սպասէք պ. բուրժուա։ Դուք այս րոպէին ասում էիք որ Լենինը խելացի և պատուաւոր մարդ է։ Ապա այդ ինչպէս է լինում որ նա չի նկատում թէ ինչ է կատարւում իր շուրջը, իսկ դուք հասարակ մահկանացուներդ նկատում էք։ Մեզ թւում է թէ դուք ինքներդ ձեզ հակասում էք։

Բուրժուաները այս ու այն կողմն են ընկնում, զգում են որ իրանք թոյլ են, և յանդգնութեամբ վերջին միջոցին են դիմում, անկիւններից սկսում

են առանձին առանձին անհատների վրայ կրակ բաց անել։

Բայց նրանից կախուած այդ եղանակներր մեզ վրայ երբեք սարսափ չեն ազդում, այդ տեսակի միջոցներով Լսէրներն էլ շատ անգամ դուրս եկան, սակայն ոչ մի եղբայրացութեան չյանգան։

Եթէ նրանից յաջողւում էլ է մեր ընկերներից մի քանիսին ոչնչացնել սպանել՝ այնու ամենայնիւ այդ հանգամանքը մեզ չի վախեցնում։ Մենք գիտենք որ յեղափոխութիւնը զոհեր է պահանջում։ Նոքա կարող են մերոնց միայն ֆիզիքապէս ոչնչացնել, բայց նոքա երբեք չեն կարող կոմմունիզմի ոգին ոչնչացնել։

Երբոր նրանք ուժանակ են դցում՝ դրանով ստիպում են բանւորներին, որ վերջինները աւելի ևս շուտով գիտակցութեան գան, իսկ դրա հետևանքն էլ այն է լինում, որ յեղափոխութեան կրակը ուժեղ կերպով բորբոքւում է, որին այլևս հանգցնել չի կարողանայ ի՞նչ տեսակի ուժ էլ որ լինի։

Մենք երբեք չենք կասկածի որ աշխատանքը պիտի յաղթի և սոցիալիզմն իրականանայ։ Երկրի վրայ դրախտ պիտի ստեղծւի, բայց թէ երբ, դա մարդուց է կախուած։

Ընկերնե՜ր, ջոկ ջոկ վերցրած մենք ճանճերի նման անօգնական ենք, ամեն մի սարդ կարող է մեզ քամել։ Բայց միւս կողմից չէ՞ որ սարդերը շատ քիչ են, իսկ ճանճերն անհամար, և որչափ

շուտ այդ ճանճերը հաւաքւեն՝ ի մի և հրաբուխի նման ընկնեն սարդերի վրայ՝ այնքան շուտ կոչն-չացնեն նրանց թաթերը, և եթէ նոյն իսկ նրանց գլուխներին ձեռք էլ չտան, այնու ամենայնիւ սարդերն առանց թաթերի այլևս չեն կարողանալու հիւսել մահաբեր ոստայններ ճանճերի համար և դանդաղօրէն ծծել նրանց արիւնը, ինչպէս որ այդ տեղի է ունեցել մինչև այսօր։

Ես վերջացնում եմ խօսքս և չեմ ուզում իմ ժամանակն ու անունը թաքցնել ոչ ոքից։ Ես Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան ազատ քաղաքացի եմ և ապրում եմ Մոսկւայի նահանգի Կլինեան գաւառի Սմերդեակեան շրջանում, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան այդ շրջանի կազմակերպութեան էլ անդամ եմ։ Այն բոլորն ինչ ես այստեղ ասացի՝ հնարկէ իմ թշնամիներին դուր չի գալիս, բայց հապա՛, թող նրանցից մէկն ու մէկը համարձակւի իմ երեսին շպրտել, որ ես ծոյլ եմ դ կամ երբևիցէ ապրել եմ ուրիշի հաշւին։

Ես կոմմունիստ եմ, այսինքն աշխատաւորների ազատագրութեան համար կռւող մարդ եմ և մինչև մահս այդպէս էլ պիտի մնամ։

Ես կոչ եմ անում բոլոր աշխատաւոր և աշխատաւորուհի ընկերներիս մտնել մեր կարմիր դրօշակի տակ, որպէսզի մեր պրոլետարական շարքերն աւելի ևս խիտ և աւելի ևս դիմացկուն լինեն։

Բոլորը թող մտնեն կոմմունիզմի կարմիր դրօշի տակ։

Մեր թշնամիները կազմակերպւած և ամուր կանգնած մասսաների դէմ կռւելու համար հարկ եղած ուժը չունեն։ Հին կարգերին վերադառնալու մասին խօսք լինել չի կարող, երբեք չի կարող պատահել որ հազարաւոր և միլիոնաւոր գիտակից աշխատաւորները միտք անեն վերադառնալ հնին, և որչափ դուք զանգւածաբար մտնել գիտակից բանւորների շարքերը՝ այնքան ուշացնելու էք կատարել յաղթանակի ժամը։

33) Ն. ԼԵՆԻՆ. «Քաղաքական կուսակցութիւնները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբերմունքը»—
34) ՎԻԼՀԵԼՄ ԼԻԲԿՆԵԽՏ. «Սարդերն ու ճանճերը»—գինը՝ 1 ռ.
35) Ն. ԵՆՏՈՆՈՎ. «Կարլոս I. Լիւդովիկ XV և Նիկոլայ II—գինը՝ 1 ռ.
36) Վ. ԿԵՐԺԵՆՑԵՒ «Անգլիացիները ի՞նչպէս են ճնշում իրանց իշխանութեան տակ գտնւող գիւղացիներին—գինը՝ 3 ռ.
37) Ե. Ա. ՊՐԵՕԲՐԱԺԵՆՍԿԻ. «Գիւղացիական Կոմմունաների մասին» — գինը՝ 1 ռ. 50 կ.
38)) Գ. ՀԱՅԿՈՒՆԻ. «Պրոլետարական յեղափոխութիւնը և Արևմտեան բոլշևիկները»—գինը՝ 3 ռ.
39) Գ. ՀԱՅԿՈՒՆԻ. «Ազգութիւնների ինքնորոշումը և Կոմմունիստները»—գինը՝ 1 ռ. 50 կ.
40) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ. «Կովկասի պրոլետարիատի պատմութիւնից Կոչի Մամէդ և Ազիզբէկով»—գինը՝ 2 ռ.
41) «Կարմիր Աստղ» (երկրորդ հրատարակութիւն)—գինը՝ 50 կ.
42) «Ի՞նչ է տուել հոկտեմբերեան յեղափոխութիւնը»—գինը՝ 1 ռ.
43) Վ. Ի. ՈՒԼԵԱՆՈՎ (Լենին). Համառօտ կենսագրութիւն (պատկերով)—գինը՝ 1 ռ.
44) ԲԱՆՈՒՈՐ ՀԱՅԿ. «Կարմիր բանակը—գինը՝ 3 ռ.
45) ՎԱՅԻՆ. Ի՞նչ բան է կոմմունան—գինն՝ 1 ռ.
46) ԲԻՑ. «Գիւղական կոմմունա»—գինն՝ 1 ռ.
47) Վ. ՏԵՐԵԱՆ. «Ի՞նչ է ասում Լենինը գիւղացիներին»—գինը՝ 2 ռ.
48) ԲՈՒՍՏՐԵԱՆՍԿԻ. «Իմպերիալիզմ»—գինն՝ 2 ռ.
49) Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. «Ազգային հարցի առթիւ»—գինն՝ 3 ռ.
50) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ. «Կովկասեան պրոլետարիատի պատմութիւնից 1 «Ալեօշա Ջափարիձէ»—գինը՝ 3 ռ.
51) Ա. ԿԱՐԻՆԵԱՆ. «Հայաստանի ապագան»
52) «Բագւի 26 կոմմունար-ընկերների յիշատակին».
53) Ն. Մ. ԼՈՒԿԻՆ (Ի. ԱՆՏՈՆՈՎ). «Եկեղեցի և պետութիւն»—գ. 1 ռ.
54) ԵԱՂ. ԼԱԼԱ. «Երկու մահ» պատկեր
55) ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ. «Միքայէլ Նալբանդեան»—գինն՝ 3 ռուբ.
56) «Հայրենիք վերադարձած գերիներին». Ողջոյն Խորհրդային Ռուսաստանից—գինը՝ 1 ռուբ.
57) Ե. ԵԱՐՕՍԼԱՎՍԿԻ. «Հայրն ու Որդին» (Վիլհէլմ և Կարլ Լիբկնեխտները)—գինը՝ 1 ռուբ.
58) ՊԱՆԷԿՈՒԿ. Կոմմունիզմ և Դէմոկրատիզմ—գինը՝ 1 ռուբ.
59) ՍՏԱԼԻՆ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնը և ազգային հարցը—գինը՝ 2 ռուբ.
60) ԿՕՆԿՕԼ. Փարիզի կոմմունան—գինն՝ 3 ռուբ.
61) Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան Սահմանադրութիւնը. 2-րդ հրատար.—գինն՝ 2 ռ.
62) * * Անգլիական իմպերիալիզմը և Արևելքը:

Ա92
69

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

1) Ն. ԼԵՆԻՆ. Պետութիւն եւ յեղափոխութ
2) Ն. ԼԵՆԻՆ. Իմպերիալիզմ.
3) Կ. ՄԱՐՔՍ. Յեղափոխութիւն եւ հակայեղափոխութիւնը Գերման-իայում:
4) Կ ՄԱՐՔՍ. Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում:
5) ԿԱՈՒՑԿԻ. Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը:
6) ՊԼԵԽԱՆՈՎ. Մարքսիզմի հիմնական խնդիրները:
7) ՊՕԿՐՕՎՍԿԻ. Ցարիզմ եւ յեղափոխութիւն:
8) Պ. ԼԱՖԱՐԳ. Բուրժուազիայի հայրենասիրութիւնը:
9) ԿՕԼԼՕՆՏԱՅ. Ընտանիք եւ կոմմունիստական հասարակութիւն:
10) ՏՐՕՑԿԻ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնը.
11) ԿԱՄԵՆԵՎ. Իմպերիալիզմ եւ Բալկանեան Հանրապետութիւնները
12) ԼԻԲԿՆԵԽՏ. Երկու աշխարհ:
13) ԿՐՈՒՊՍԿԱՅԱ. Ժողովրդական կրթութիւնն եւ դէմոկրատիան:
14) ՏՐՕՑԿԻ. Ժան Ժօրէս:
15) ՖՐ. ԷՆԳԵԼՍ. Կոմմունիզմի սկզբունքները (Կոմմունիստական Մա-նիֆեստի նախնական խմբագրութիւնը):

Գինն է՝ 4 ռուբ.